ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«24» օգոստոսի 2022 թ. N 110-Ա/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 147-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին գործավարության կարգը հաստատելու մասին» N 147-Ա/1 հրամանի հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ լրացումները.

1) 42-րդ կետը «հրամանների» բառից հետո լրացնել «և սոցիալական պաշտպանության վարչարարության 2-րդ ծրագրին (այսուհետ՝ ՍՊՎԾ 2) առնչվող հրամանների» բառերով.

2) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 47.1-ին, 47.2-րդ 47.3-րդ և 47.4-րդ կետերով՝

«47.1 ՍՊՎԾ 2-ի համապատասխան խորհրդատուն (այսուհետ խորհրդատու) հրամանի նախագիծը ձևավորելուց հետո համակարգով ուղարկում է համաձայնեցման՝ ՍՊՎԾ 2-ի իրավաբան խորհրդատուին: Դրական դիրքորոշումը ստանալուց հետո խորհրդատուն «ուղարկել հաստատման» կոճակով հրամանի նախագիծն ուղարկում է ՍՊՎԾ 2-ի համակարգողին (այսուհետ՝ համակարգող): Համակարգողը հրամանի

նախագիծն ուղարկում է հանձնարարական տալու իրավասություն ունեցող անձին՝ ստորագրման:

47.2 Հրամանների նախագծերը էլեկտրոնային եղանակով ստորագրելուց հետո հանձնարարականը տալու իրավասություն ունեցող անձը «ստորագրված է» կոճակով ուղարկում է համակարգողին:

47.3 Համակարգողը հրամանը համակարգով փոխանցում է խորհրդատուին՝ տպելու և սահմանված կարգով համարակալելու համար:

47.4 Խորհրդատուն ստորագրված և համարակալված հրամանի պատճեններն ըստ անհրաժեշտության ուղարկում է հասցեատերերին և ավարտում գործի ընթացքը:

3) 53-րդ կետը «բաժնում» բառից հետո լրացնել «, ՍՊՎԾ 2-ին առնչվող հրամանները՝ սոցիալական պաշտպանության վարչարարության 2-րդ ծրագրի համակարգման գրասենյակում» բառերով:

8/24/2022

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ